



ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԽԱՏՅՈՒՏԱԿԱՆ

ԺԶ. ՅԱՐԵ 1902

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 րբ.:
Վեցամսեայ 6 ֆր. ոսկի — 2 րբ. 50 կ.:
Մեկ թիւն կ'ալիճէ 1 ֆր. — 50 կ.:

ԹԻԻ 6. ՅՈՒՆԻՍ

ՈՐՄԱՌՄԱՆԱԿԱՆ

ԳԱՏԱԿԱՆ

ԵՂՈՒՄՆԱԿԱՆ ԳԱՏԱԿԱՆ ՈՐ ՄԱՌՄԱՆԱԿԱՆ
1848 ԵՄ 1849 ԻՆ ԵՂՈՒՄՆԱԿԱՆ ԳԱՏԱԿԱՆ

(Երկուսն էլ ինքնաշարժառնալիքով):



Եւ հանդիպած ատեն,
քաղքին տիկնանցը
մեջէն, Եղիարեթ
Գանիէլ, Պետրոս
Գաբուէպովեանին
կրթեալ կնիկն ուրիշ
առաջին կարգի տի-
կիները հետ առած՝
կայսերական յան-

ձնակատարին ներկայացաւ, եւ խոնարհութեամբ
ժողովորեան համար զթուրթիւն խնդրեց՝
անոր խղճալի վիճակը հազարապետին առջեւը
դնելով: Բայց պատգամաւորութիւնը՝ նպատա-
կին չհասաւ: — Թէպէտ եւ Յուլիս 29ին առ-
տուն՝ ռուսական բանակը դէպ ի Հիկիլձար ճամբայ
ելաւ. այսու ամենայնիւ, հոս մնացին քաղքին
ամենէն ահաւոր թշնամիները՝ Տորչեր, Սլպերգի-

եւ Հայդէ, որոնց առաջին գործքն ան եղաւ, որ
քաղաքային խորհուրդն իրենց առջեւը կանչել
տան. եւ անոր՝ պատերազմի ծախուց ապահա-
վացուցմանը համար Սառ-Էրնէ եւ Հունտորֆ
գեղերուն տուչութեան թուղթն ստորագրել
տան. — եւ զինուորաց համար ամեն տեսակ եկա-
մուտն հրաժարին: — Սլպերգի՝ Յակովբ Սէնդ-
բըղերին՝ քառասուն ձի առաւ. եւ քաղաքային
խորհրդին երդում ընել տուաւ, որ կայսեր
հրամանները հաւատարմութեամբ պիտի կա-
տարէ: Միանգամայն հրամայեց քաղաքային
վարչութեան, որ իրեն հպատակութեան նշանը
ցուցընէ Հիկիլձար գացող Վիտէրս եւ Սկա-
րիագին զօրավարներուն:

Քաղաքային խորհուրդը՝ թէպէտ գնաց
Հիկիլձար՝ անոնց հանդիպելու համար. բայց
որովհետեւ զանոնք հոն չգտաւ, Տորչերի առ-
ջէն ելաւ: Ասիկայ՝ խորհրդականները նորէն
յանդիմանեց եւ իրենց հրամայեց, որ զՓրանկ,
Պենետէք բողոքական քահանայ, զՓրանկ, Միգ-
փաստաբանը, զՍտոն Իսիգուց ուսուցիչն եւ
զՅովհ. Էդգլէշ՝ բանասիրին եւ իրենց ստա-
ցուածքը յաբրուսի գրաւեն: Հունգարացուց
հետ գաշնակցութեան մէջ եղած երիտասարդ-
ներուն անուաններ 48 ժամու մէջ իրեն ծանու-
ցանեն, ապա թէ ոչ՝ չէ թէ միայն զիրենք խա-
րազանել կու տայ, հապա նաեւ կախաղան կը
հանէ: — Ասիկց ետք՝ զիրենք առջեւէն վրն-
տեց, ու քովը պահեց միայն զՍտուածատուր
Նուրիճան՝ քաղաքային պաշտպանը:

Քաղաքաբաշխութիւնն՝ իրրեւ թէ իր յատուկ վերջնական դատաստանին առջեւ կեցած՝ իրեն եղած հրամանին վրայ խորհուրդ ընելէն ետեւ, յօրինեց աղաչանաց թուղթ մը, զոր Յովսէփ Բորոյ ժողովը գրաւեալ։ Լ. Մարաբիա եւ քաղքին նախակարգ տիրնայքը պիտի տանէին Տորոնթերի։ Բայց Աստուծոյ նախախնամութեամբն աւելի շուտով ազատեցան, քան որչափ կը յուսային։ Աղաչանքը պատգամաւորութիւնը Շիկիշվար հասաւ Յուլիս 31ին։ Նոյն միջոցին հոն հասաւ նաեւ հունգարական զօրքն, ու հարկաւորութիւն չեղաւ ողորմութիւն խնդրելու։

Թէպէտ Ա.գոստ. 7ին, Շիկիշվարի քով՝ Սկարիադին ուսւ զօրավարն ինկաւ. բայց ուսական զօրքը դէպ ի նշխարութիւն պոլսոյ յառաջ քալեց։ Բանակը՝ քաղքին մէջ գտած ամէն տեսակ անասուն ու հաւեղէն առաւ տարաւ, — պարտէզներէն՝ չհասունցած դգում, դեղինցած վարունգ, պտուղ եւ անհամ ու անուսնի բոյս կերաւ, սպառեց։ Քաղաքը տուաւ բանակին ջաց, վարակ, խոտ. այնպէս որ առանց շատ անհանգստութիւն պատճառելու, դէպ ի Մէտիաշ յառաջացաւ։

Ա.գոստոս 11ին, կայսերական յանձնակատարը՝ քաղաքային խորհուրդը տեղեկացուց, որ Վոյկէմութ՝ Սիպինի մէջ, իւր վեհափառութիւնէն, Գրանսիլաւսից կառավար եւ զօրապետ անուանուելով՝ ասկից ետք պաշտօնական գրութիւններն իրեն ուղղուելու են։

Կառավարը՝ Հոկտ. 11ին նշխարութեւ պոլսի գալով, քննութեան տակ ձգեց զօրանոցը. եւ քաղաքացւոց խնդրանք քիչ մ'ետք զինուոր դրաւ հոն։

Ասոր յարդրեց քննութիւնն։ Գրիգոր Տայպուգադ եւ մէկալ ուսուցիչները՝ պատեւազմի դատաստանին առջեւ ելան։ Մարտիոս Բօքեան բանտարկուեցաւ, ուրիշները՝ կայսերական բանակին մէջ զինուոր դրուեցան։ — Քաղաքը կորսեցուց իր անկախութիւնն ու վիճակական յանձնակատարի մը տակ ինկաւ։

Ասով լմնացաւ քանիներու եւ քանիներու սրտին մէջ մեծ յոյսեր ծնանող յեղափոխութիւնն առանց արդիւնքի մը. — մասնաւոր թէ ոչ առանց քիչ կորստեան, ազգայնոց համար — Ասոր վրայ ոգիներն արտաբուստ խաղաղացան, ու մնաց շատ ողբ, հեծեծաձեք ու աղետալի հետեւանք։

Չնկատելով՝ թէ յեղափոխութիւնն եղին տարեթուպոլսոյ ազգայնոց որչափ բարոյական փնտաւրած է, — հարկ է որ ընդուռ նիւնք, թէ արտաքոյ կարգի էր իրենց նիւթական կորուստը։ — Անհատում գանձ ու ստացուածք յափշտակեցին զինուորներէն զատ՝ մերձուոր ու հեռուոր քառասունուորս գիւղաւ, քաղքի, գեղի եւ քաղաքի բնակիչները։ Կողպուտը՝ ժամանակակից տարեգիրները մերձաւորապէս 500.000 ֆիորին կը հաշուեն։ Թէ իրօք այսչափ էր, հաստատապէս չենք գիտեր, Բայց այնչափ կրնանք ըսել ստուգապէս, թէ յեղափոխութիւնն զնշխարութեւսոյ ազգայիններն իրենց փճանալուն ծայրը հասցուց։ Բեկալ իրենց զօրութեան ջիւղն. անանկ որ չիրցան մէյ մ'ալ յառաջուան բարօրութեան հասնիլ։ Չհասեցան, տկարացան, ինկան, մէյ մ'ալ չեւելու համար։ —

Թէպէտ խռովայոյզ ատեններն անցնելէն ետեւ, ինչպէս տեսանք, վերին իշխանութիւնը՝ քննութիւն ընել տուաւ. — ու եղիսարութեւ պոլսոյ ազգայիններէն կողպուտած բաներէն ինկ մը ոչինչ արժէք ունեցող բան դարձնալ ետ եկաւ։ Սակայն կողպուտած ու տարուած ստացուածքն եւ ոչ հարկերն մէկն էր ետ դարձած։ Մէյ մը կորսուածը՝ կորսուած մնաց։ Պատեւազմական ծախքերուն վրայեք եղած վճարմաններուն անդորրագիրները դեռ կեցած են. թէպէտ ոչ ամէնը։ Մէկ երկուքը՝ դրուած անցուած են դիւանատան թղթերուն մէջ — դերմաներէն լեզուաւ։ Ասոցմէ մէկուն թարգմանութիւնն է յարդրը։

«Կայսերական թագաւորական զինուորական քաղաքային վերին հրամանատարութիւն ի Շիկիշվար»։

Անդորրագիր
4047 ֆիոր. — քու. այսինքն՝ Չորս հազար ու քառասունութ թիորինի վրայ. գաշնադրութեան դրամով (Conv. Münze). զոր վերոյգրեալ քաղաքային հրամանատարութիւնն նշխարութեւսոյ վրայ քաղքէն իբրեւ պատերազմի տուրք, ճշգրիւ ու իրապէս ընդունած է, պաշտօնապէս կը հաստատուի։

Շիկիշվար 1849, Փետր. 6.

«1849. J. 3.
Հաղարապետ»։

« Vom k. k. Milt. Stadt Comdo zu Schäsburg.
Quittung
Uiber 4047 fl. — kr. Sage! Vier Tausend Vierzig Sieben
Gulden in C. M. welche das obige Stadt Commando, am

Ուրիշ անդորրագիր մը յաջորդ կերպով սրուած է.

“Կայսերական թագաւորական զինուորական քաղաքային հրամանատարութիւն ի Շիկիշվար.

Անդորրագիր.

1053 ֆիւր. — քու. այսինքն՝ Մէկ հազար ու յիսուն ու երեք ֆիւրին վրայք դաշնագրութեան դրամով, զոր վերոգրեալ զինուորական քաղաքային հրամանատարութիւնն, իբրեւ պատերազմական արդց դրամ, եղիտարեթուպուիս քաղքէն, այս օրս ճշգրիւ եւ իրապէս ընդունած է. պաշտօնապէս կը հաստատէ:

Շիկիշվար 1849, ֆետր. 12.

‘1849. յ. յ.’

Հազարապետ՝:

Երթեւեկող զինուորական վերին հրամանատարութիւնն ալ, որ Հայդէ հազարապետին առաջնորդութեանը տակ ասգին անդին կը պտտէր ու կը հսկէր՝ յաջորդ անդորրագիրը սուս 8000 ֆիւրինէն մնացած 2900 ֆիւրինէն վրայք:

“Երթեւեկող (Streif.) հրամանատարութիւն.

Հաստատութիւն.

2900 ֆիւր. այսինքն երկու հազար ինը հարիւր ֆիւրին վրայք դաշնագրութեան դրամով, զոր եղիտարեթուպուիս քաղաքէն, պահմանք մնացած պատերազմական արդց ստակէն, ստորեւ գրողին իրապէս ու ճշգրիւ վճարած է:

Վալտիւգիւքէն 849, մարտ 10:

Այսինքն 2900 ֆ. գշն. դրամ:

Պարոն Հայդէ. յ. յ.

Հազարապետ՝:

Kriege-Contributions Gelder von der Stadt Elisabethstadt richtig und baar übernommen hat, quittirt.

Schäsburg den 6ten Febr. 1849.

Nipp, m. p. Major,

1 Vom k. k. Milit. Stadt Comd. zu Schäsburg.

Quittung

Ueber 1053 fl. — kr. Sage: Ein Tausend Fünfzig drei Gulden — kr. in Conv. Münze, welche das obig. Milit. Stadt Commando, an Kriegs Contributions Geldern, von der Stadt Elisabethstadt, unter heutigen dato richtig und baar übernommen hat, amtl. quittirt.

Schäsburg, den 12ten Februar 1849.

Nipp, m. p. Major,

1 Streif Comando.

Bestätigung

Ueber 2900 fl. Sage: Zwei Tausend Neunhundert Gulden in Conv. Münze, welche die Stadt Elisabethstadt an

Տաւապանաց ու աղբատութեան վերին ծագը հասած քաղաքացիք՝ որպէս զի իրենց ողորմելութեանը քիչ մը օգնեն, մտածեցին որ վերին իշխանութեան դիմեն, եւ իրենց խնդրութիւնն անոր առջեւ դնելով՝ խնդրեն որ եղած մեծ փաստերը քիչ մը տեղը բերեն:

Ուստի փնտս կրող եւ փճանալու ծագը համոզ քաղաքացիներէն իբր 35 հոգւոյ ստորագրութեամբ՝ քաղաքային վարչութեան աղաչանաց թուղթ մը գնաց, Ասոր մէջ՝ եղած կողպուտներն ու հասուցած փաստերը կենդանի գունով քաղաքաբաշխութեան առջեւ դնելէն ետեւ, կը խնդրեն, որ քաղաքային խորհուրդն, իր կողմանէ գրէ եղածները Սալմէն, կայսերական թագաւորական գաւառական յանձնակատարին, որպէս զի ասիկայ ճամբայ մը գտնէ, գտնէ առժամանակեայ կերպով՝ ամեն օրւան հացերնին գտնելու:

(Հարուստիւն):

ՅՈՒՆԻՍ. ԱՆՆՅՈՒ



ՍԿՂԲԵՆԻՐԱԹԻՐԻՆԵ ԲԻԶՆԵԳԵՆԵ ԲՆԵՆԵԹԵՄԵՐԻԹ ԹԵՄԵՆԵ

(Հարուստիւն):

Ձ.

Բիւլետենի գետնիւն առաջին լուսնիւնը
Ի՛ր Գործուն Դէլ:

Տեսանք թէ Ի՛ր գործուն կայսրութեան բոլոր երկիրներուն վրայ տարածուած բանակութեանը գրութիւնը՝ զուտ զինուորական կազմակերպութիւն ըլլալով, քաղաքական վարչութեան հետ ամենեւեւ անհարկութիւն չունէր: Իսկ քաղաքական վարչութեան մէջ գիտկոչեալներն, յուսախիսեան եւ յետուստիանեան նախնի կուսակալները դեռ իրենց պաշտօնն անվրդով կը վարէին: Արի յայտնի կ'երեւայ Ձ՛ տիեզերական (680) եւ Հինգվիցեան (693) Ժողովոյ մասնակցողներու ու ստորագրողներու ցանկերէն:

Այս ցանկերու համաձայն՝ Արիս հետեւեալ քաղաքային գաւառներու կը բաժնուէր. Կապադովիսիա Ա., Արիս, Գաղատիա Ա., Հելլոպոնտոս, Լիւգիա, Բիւթանիա, Պամփիլիա, Բուսական Պոնտոս, Կապադովիա Բ., Պամփուգոնիա, Հանսրիս, Պոդմոնեան Պոնտոս, Գաղատիա Բ., Լիւկիա, Կարիա, Պակատիանեան Փոնդիա, Փրկուտն Փոնդիա, Լիւկանիա, Պիսիդիա, Դեսոն, Ա. եւ Բ. Հայք, Մեծ Հայք, Դ. Բուստիանիա: Պե-

rückständigen Contributions Geldern an Gefertigten baar und richtig abgeführt hat.

Waldhütten am 10. März 849.

Br. Hayette, m. p. Major.